



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅԵՅԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Բովանդակություն

Ներածություն.....	2
1. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ և ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	3
2. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	6
3. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ (ՕԲՅԵԿՏՆԵՐԸ)	8
4. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (ՊԱՀԱՆՋՆԵՐԸ)	10
5. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ (ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ) և ՆԵՐԱԶԴՄԱՆ ԼԾԱԿՆԵՐԸ11	
5.1. Վճարված չարկերի և արժեթղթերի չարկերի չարկերի մոնիթորինգ և վերլուծություն. 12	
5.2. Հաճախորդների վճարված չարկերի և արժեթղթերի չարկերի չարկերի գնահատում (ASSESSMENT)	13
5.3. Հաճախորդների չարկերի գնահատման արդյունքների ներկայացում և փոփոխությունների նախաձեռնման նպատակով	14
5.4. ՀՀ-ում գործող արժանաչման չարկերի չարկերի չարկերի արժանաչման չարկերի ներկայացում.....	15
6. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	16
7. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	17
ՀԱՎԵԼՎԱԾ 1	18

Ներածություն

Սույն հայեցակարգի նպատակն է սահմանել ՀՀ-ում գործող վճարահաշվարկային համակարգերի¹ և արժեթղթերի հաշվարկային համակարգերի (այսուհետ՝ ֆինանսական շուկայի ենթակառուցվածք կամ ՖՇԵ) հսկողության (այսուհետ՝ ՖՇԵ հսկողության կամ հսկողության) բնագավառում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի քաղաքականությունը՝ սկզբունքները, իրավասությունները և ներագրման լծակները, նպատակները, շրջանակը (հսկողության օբյեկտները), համակարգերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև հսկողության իրականացման գործընթացը, համագործակցության, հաշվետվողականության ու հանրությանը տեղեկացման շրջանակները:

Վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերը հանդիսանում են ֆինանսական համակարգի կայունության ապահովման համար կարևոր ենթակառուցվածք. վերջիններիս միջոցով են իրականացվում ինչպես միջբանկային վճարումները (ֆիզիկական և իրավաբանական անձանց, բանկերի սեփական վճարումներն ու փոխանցումները) և կառավարության կողմից կատարվող վճարումներն ու բյուջե ուղղված վճարումների հավաքագրումը, այնպես նաև այլ կարևոր նշանակություն ունեցող համակարգերի (քարտային և այլ հանրային համակարգերի,) ֆինանսական շուկայի գործարքների, կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հետ կապված գործարքների վերջնահաշվարկները,:

Վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի կայուն և արդյունավետ գործունեությունն ապահովում է ամբողջ տնտեսության բնականոն աշխատանքը: Այնուամենայնիվ, վերջիններս կարող են զգալի ռիսկեր պարունակել մասնակիցների համար և խափանումների փոխանցման և տարածման միջավայր հանդիսանալ տնտեսության կամ ֆինանսական համակարգի մի հատվածից մյուսին: Նման ռիսկերի առկայության պատճառով վերոնշյալ համակարգերը հանդիսանում են կենտրոնական բանկերի ուշադրության առարկա, իսկ ՖՇԵ հսկողությունը դիտարկվում է կենտրոնական բանկերի կարևոր խնդիրներից մեկը:

Համաձայն Միջազգային հաշվարկների բանկի (BIS, այսուհետ՝ ՄՀԲ) կողմից տրված սահմանումների և մոտեցումների.

- «Վճարային և հաշվարկային համակարգերի հսկողությունը կենտրոնական բանկի գործառույթ է, որի նպատակն է ապահովել համակարգերի անվտանգությունն ու արդյունավետությունը՝ գործող և նախագծվող համակարգերի դիտարկման (մոնիթորինգ), վերջիններս վերոնշյալ նպատակներին համապատասխանության գնահատման (assessment) և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների նախաձեռնման միջոցով»²:
- Հսկողության գործառույթը կարող է ներառել ֆինանսական շուկայի ենթակառուցվածքները, այլ վճարահաշվարկային փոխհարաբերությունները, ինչպես նաև

¹ Սահմանումը՝ համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի

² “Central Bank Oversight of Payment and Settlement Systems”, BIS , 2005

մանրաձախ³ վճարումների գործիքներն ու սխեմաները՝ կախված տվյալ երկրի կենտրոնական բանկի կողմից սահմանված հսկողության շրջանակից⁴:

Այսպիսով հսկողության նպատակն է խթանել վճարային և հաշվարկային համակարգերի անվտանգությունը և արդյունավետությունը՝ բացահայտելով և վերլուծելով այդ համակարգերին սպառնացող ռիսկերը և ներկայացնելով առաջարկություններ՝ նվազեցնելու ռիսկերը և բարձրացնելու համակարգերի արդյունավետությունը:

Կարևորելով վերոնշյալ գործընթացները՝ 2006թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վճարային համակարգի նկատմամբ հսկողության իրականացման հայեցակարգը», որում սահմանված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ կենտրոնական բանկ կամ ՀՀ ԿԲ) կողմից հսկողության իրականացման քաղաքականությունը: Սույն հայեցակարգում թարմացվել և վերանայվել են հսկողության քաղաքականության որոշ դրույթներ՝ համապատասխանեցնելով միջազգային զարգացումներին:

Հայեցակարգում լուսաբանված են ՀՀ կենտրոնական բանկի հսկողության քաղաքականության հիմնադրույթները, այն է.

- 1) հսկողության իրականացման սկզբունքները և իրավասությունները,
- 2) հսկողության նպատակները,
- 3) հսկողության շրջանակը (հսկողության օբյեկտները),
- 4) հսկողության շրջանակում ներառված համակարգերին ներկայացվող սկզբունքները/ պահանջները,
- 5) հսկողության իրականացման գործընթացը և ներազդման լծակները,
- 6) համագործակցությունը այլ իրավասու մարմինների հետ,
- 7) հսկողության արդյունքների վերաբերյալ հաշվետվողականությունը՝ հաշվետվությունները և տեղեկատվության տրամադրումը:

Վերը նշված հիմնադրույթներն առավել մանրամասն նկարագրված են հայեցակարգի հաջորդ գլուխներում:

1. Հսկողության իրականացման սկզբունքները և իրավասությունները

- 1.1. ՀՀ ԿԲ-ն հսկողության սկզբունքները սահմանելիս հիմք է ընդունել Միջազգային հաշվարկների բանկի կողմից կենտրոնական բանկերին կամ հսկողության իրականացման իրավասություն ունեցող այլ պետական մարմիններին ներկայացվող

3 Մանրաձախ վճարումներ, մանրաձախ վճարումների համակարգ՝ համաձայն BIS-ի և ԵԿԲ-ի սահմանումների (“Principles for Financial Market Infrastructures”, BIS 2012, <https://www.ecb.europa.eu/paym/retpaym/undpaym/html/index.en.html>)

⁴ “Principles for Financial Market Infrastructures”, BIS, 2012

հիմնարար սկզբունքները և պարտավորությունները⁵, ինչպես նաև հաշվի է առել այս բնագավառում միջազգային առաջատար փորձը:

1.2. ՀՀ կենտրոնական բանկի հսկողության իրականացման սկզբունքներն են.

Թափանցիկության սկզբունք - ՀՀ կենտրոնական բանկը պետք է հստակ և հրապարակայնորեն սահմանի հսկողության բնագավառում իրականացվող իր քաղաքականությունը, այդ թվում՝ ներկայացվող պահանջները, հսկողության օբյեկտ հանդիսացող ՖՇԵ-ի ընտրության չափանիշները, հսկողության մեթոդները: Վերջինիս ապահովումը հնարավորություն է տալիս հսկվող սուբյեկտներին հասկանալ իրենց առջև սահմանված պահանջները, իրականացվող գործընթացը և հիմքերը՝ ունենալով վստահություն, որ սկզբունքը նույնն է նմանատիպ ՖՇԵ-ների նկատմամբ:

Հսկողության բնագավառում ՀՀ ԿԲ կողմից իրականացվող քաղաքականությունը սահմանվում է սույն հայեցակարգով, որը հաստատվում է ՀՀ ԿԲ նախագահի հրամանով և հրապարակվում է ՀՀ ԿԲ պաշտոնական կայք-էջում: Բացի այդ, ՀՀ ԿԲ-ն հրապարակում է նաև իր կողմից հսկողության բնագավառում իրականացվող աշխատանքների և արդյունքների մասին այլ տեղեկատվություն, որի շրջանակը և պարբերականությունը սահմանված են սույն փաստաթղթի Գլուխ 7-ում:

Իրավասությունների առկայության սկզբունք - հսկողության գործառույթը իրականացնելու համար ՀՀ կենտրոնական բանկը պետք է օրենսդրորեն օժտված լինի անհրաժեշտ իրավասություններով և պետք է ունենա բավարար չափով ռեսուրսներ՝ իր գործառույթն արդյունավետ իրականացնելու համար

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի 1-ին կետի «գ» ենթակետով ԿԲ այլ նպատակներից է հանդիսանում նաև «գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը», որն իրագործելու համար «... կենտրոնական բանկը կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգերը, իրականացնում է վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի հսկողություն» (հոդված 5-ի 2-րդ կետի «ե» ենթակետ):

Բացի վերոնշյալ օրենքում սահմանված դրույթներից, ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերահսկողության իրականացման համար իրավասություններ են սահմանված նաև «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Վճարահաշվարկային օրենք) համապատասխան դրույթներով: Մասնավորապես՝ հոդված 13-ում սահմանված է վերահսկողության իրավասություն (այն է՝ հաշվետվություններ ստանալու, տեղերում ստուգումներ իրականացնելու, տեղեկատվություն (այդ թվում՝ գաղտնի) պահանջելու իրավասություն, իսկ հոդված 15-ում՝ ՀՀ իրավական ակտերի պահանջները խախտելու համար պատժամիջոցներ կիրառելու իրավասություն:

⁵ “Central bank oversight of payment and settlement systems - General principles for oversight”, BIS, 2005, “Principles for Financial Market Infrastructures – Responsibilities of central banks, market regulators, and other relevant authorities for financial market infrastructures”, BIS, 2012

Օրենքների մակարդակով ՀՀ կենտրոնական բանկին տրված հսկողության լիազորությունները ընդհանրական են, մինչդեռ հսկողության գործառնության գործիքակազմը սահմանվում է հսկողության քաղաքականությամբ, այն է՝ սույն փաստաթղթով (մանրամասները՝ Գլուխ 5-ում) և, անհրաժեշտության դեպքում, ՀՀ կենտրոնական բանկի ենթաօրենսդրական ակտերով:

Միջազգային ստանդարտներին համապատասխանության սկզբունք - ՀՀ կենտրոնական բանկի հսկողության քաղաքականությունը հիմնվում է միջազգայնորեն ընդունված սկզբունքների (ստանդարտների) վրա, մասնավորապես՝ ՄՀԲ-ի կողմից սահմանված ՖՇԵ-ներին վերաբերող սկզբունքների⁶

ՀՀ ԿԲ քաղաքականության համաձայն՝ ՄՀԲ-ի կողմից սահմանված ՖՇԵ-ներին վերաբերող միջազգային սկզբունքները կիրառվում մ են ՀՀ ԿԲ-ի կողմից հսկողության շրջանակում ներառված ՖՇԵ-ների գնահատման ժամանակ:

Հավասար պայմանների ապահովման սկզբունք - ՀՀ կենտրոնական բանկի կողմից նմանատիպ համակարգերի հսկողությունն իրականացնելիս պետք է կիրառվի նույնատիպ մոտեցում՝ անկախ ՀՀ ԿԲ-ի համակարգ է, թե մասնավոր:

Ըստ Գլուխ 4-ի դրույթների՝ ՖՇԵ-ի նկատմամբ կիրառվող սկզբունքների շրջանակը պայմանավորված է ՖՇԵ-ի տեսակով (վճարահաշվարկային համակարգ, արժեթղթերի հաշվարկային համակարգ) և հանրային/համակարգային դասվելու չափանիշներով: Որևէ բացառություն ՀՀ կենտրոնական բանկի համակարգերի համար սահմանված չէ: ՀՀ ԿԲ կողմից իրականացվում է իր համակարգերի գնահատում՝ համաձայն վերոնշյալ միջազգայնորեն ընդունված սկզբունքների (ստանդարտների), իսկ սեփական համակարգերի հսկողության, այդ թվում՝ գնահատման անաչառությունը ապահովվում է նրանով, որ հսկողության գործառնայթը և համակարգի գործառնական գործառնայթը իրականացվում է ՀՀ ԿԲ տարբեր վարչությունների կողմից: ՀՀ կենտրոնական բանկի կողմից իր համակարգերի հսկողության ամփոփ արդյունքները հրապարակվում են համապատասխան հաշվետվություններում:

Համագործակցության սկզբունք - ՀՀ կենտրոնական բանկը ֆինանսական ենթակառուցվածքների նկատմամբ հսկողություն իրականացնելիս պետք է արդյունավետ համագործակցություն ապահովի ինչպես երկրի ներսում շահագրգիռ այլ պետական մարմինների և ՖՇԵ-ների օպերատորների (անհրաժեշտության դեպքում՝ նաև ներգրավված այլ կողմերի) հետ, այնպես էլ միջազգային կառույցների և համատեղ հսկողության շրջանակում ներառված գործընկեր կենտրոնական բանկերի կամ նմանատիպ կառույցների հետ:

ՀՀ ԿԲ-ն ՖՇԵ-ի գնահատման արդյունքները և իր առաջարկությունները ներկայացնում է քննարկման ՖՇԵ-ի օպերատորին՝ աշխատելով ապահովել հայտնաբերված խնդիրների լուծմանը ուղղված որոշումների կայացումը օպերատորի հետ շահագրգիռ երկխոսության և համագործակցության միջոցով:

⁶ “Principles for Financial Market Infrastructures”, BIS, 2012

Հսկողության բնագավառում միջազգային համագործակցությունը հիմնվում է համատեղ հսկողության իրականացման համար ՄՀԲ-ի կողմից սահմանված համատեղ միջազգային հսկողության սկզբունքների վրա⁷։
Համագործակցության սկզբունքները մանրամասն սահմանված են Գլուխ 6-ում։

Ռիսկերի վրա հիմնված հսկողության սկզբունք (risk oriented)

Սույն հայեցակարգով սահմանված սկզբունքները (պահանջները) կիրառվում են միայն այն ՖՇԵ-ների նկատմամբ, որոնցում առկա կամ հնարավոր ռիսկերը կարող են ազդել երկրի ֆինանսական համակարգի կայունության վրա։

Նպատակին ուղղվածության սկզբունք - հսկողությունը պետք է լինի նպատակին ուղղված (goal oriented)։ ՀՀ ԿԲ-ն գնահատում է, արդյոք ՖՇԵ-ները համապատասխանում են սահմանված սկզբունքներին (պահանջներին), սակայն վերջիններիս ապահովման մեթոդներն ու տարբերակները թողնված է ՖՇԵ օպերատորների հայեցողությանը, ինչը նպաստում է արդյունավետ լուծումների ներդրմանը։

2. Հսկողության նպատակները

2.1. Միջազգային փորձը վկայում է, որ անկախ հսկողության բնագավառում օրենսդրությամբ սահմանված իրավասություններից և կիրառվող տերմինաբանությունից, կենտրոնական բանկերը որպես հսկողության նպատակ են դիտարկում կայունությունը/ անվտանգությունը (safety) և արդյունավետությունը (efficiency)⁸ սահմանափակելով համակարգային ռիսկը և նպաստելով ֆինանսական կայունության և թափանցիկության ապահովմանը։ Չնայած համակարգային ռիսկի կառավարումը հանդիսանում է առաջնային նպատակ, սակայն տվյալ երկրի նպատակների միջև գերակայության ընտրությունը կախված է տարբեր գործոններից՝ տվյալ երկրի կենտրոնական բանկից և իր առջև ծառայած խնդիրներից, հսկվող համակարգի առանձնահատկություններից և տվյալ պահին առկա իրավիճակից, և այլն։

2.2. Կան երկրներ, որոնք բացի անվտանգությունից և արդյունավետությունից, որպես հսկողության նպատակ են սահմանում նաև, օրինակ, արժույթի նկատմամբ հանրության վստահությունը, դրամավարկային քաղաքականության համար փոխանցման մեխանիզմների անվտանգության ապահովումը, սպառողների շահերի պաշտպանությունը, հակամրցակցային պայմանների ապահովումը, փողերի լվացման դեմ պայքարի վերահսկումը, և այլն։

⁷ “Central Bank Oversight of Payment and Settlement Systems-Principles for international cooperative oversight”, BIS, 2005

⁸ Որպես հսկողության օրենսդրորեն սահմանված նպատակ տարբեր երկրների կողմից կիրառվում են տարբեր տերմիններ։ Օրինակ՝ «սահուն գործունեություն» (smooth operation- Եվրոպական կենտրոնական բանկ, Նիդեռլանդներ), «բնականոն գործունեություն» (regular operation- Իտալիա), «սահուն գործունեություն և անվտանգություն» (smooth operation and security- Ֆրանսիա), «յուրաքանչյուր համակարգի գործառնական և ֆինանսական կայունություն...նպատակ ունենալով ապահովել երկրի ֆինանսական կայունությունը» (Ljubusներուրգ), և այլն։

- 2.3. Գերակայություն տալով կայունության/ անվտանգության և արդյունավետության ապահովմանը՝ ՀՀ ԿԲ կողմից կարևորվում է նաև անկանխիկ վճարումների նկատմամբ հանրության վստահության ապահովումը, ինչը պայմանավորված է ստվերայինության կրճատման, վճարումները ֆինանսական հաստատությունների միջոցով իրականացման, կանխիկի կիրառման կրճատման, վերջնահաշվարկի արդյունավետ իրականացման հետ կապված ՀՀ ԿԲ քաղաքականությամբ:
- 2.4. ՀՀ ԿԲ կողմից հսկողության իրականացման քաղաքականությամբ սահմանվող նպատակները հետևյալն են.

Առաջինը՝ ապահովել ՀՀ-ում գործող վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի **կայունությունը (անվտանգությունը)**՝ ռիսկերի սահմանափակման (գսպման) միջոցով:

Վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերը կարող են հանդիսանալ համակարգային ռիսկերի առաջացման և տարածման միջավայր: Համակարգային ռիսկի առաջացման աղբյուրը կարող է տարբեր լինել: Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, երբ տեխնիկական վթարի հետևանքով խափանվում է համակարգի սահուն գործունեությունը կամ երբ համակարգի մասնակիցներից մեկը անկարող է կատարել իր ֆինանսական պարտավորությունները, և համակարգում բացակայում են հատուկ մեխանիզմներ, որոնք կարող են սահմանափակել տեխնիկական վթարի կամ ֆինանսական խնդիրների բացասական հետևանքների շղթայական տարածումը այլ մասնակիցների վրա: Վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի կայունությունը ապահովելու համար ՀՀ ԿԲ-ն պետք է հսկի, որ համակարգերի կազմակերպման և գործունեության կանոնները չնպաստեն ռիսկերի գոյացմանը կամ տարածմանը, համակարգում սահմանված լինեն ռիսկերի կառավարման մեխանիզմներ և համակարգի մասնակիցներն ունենան հնարավորություններ և խթաններ հնարավոր ռիսկերը գսպելու համար:

Երկրորդը՝ ապահովել ՀՀ-ում գործող վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի գործունեության **արդյունավետությունը**:

Վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի արդյունավետության տեսակետից կարևոր է, թե ինչքանով է համակարգը բավարարում մասնակիցների և վերջիններիս հաճախորդների պահանջները և սպասումները, ինչքանով է համակարգի տեխնիկական ապահովումը ճկուն՝ արձագանքելու համար նոր տեխնոլոգիաներին և շուկայի նոր պահանջներին, ինչպես նաև որքանով է իրականացվում օպերատորի կողմից ծախքերի հսկողությունը և արդյունավետության մշտական վերլուծությունը՝ այդ թվում կապված գնագոյացման հետ:

Համակարգի անարդյունավետ աշխատանքը կամ ոչ նպատակաուղղված գործունեությունը կարող է բացասաբար անդրադառնալ ֆինանսական շուկայի/կամ դրա որոշակի հատվածի վրա, նպաստել ռիսկերի առաջացմանը, այդ թվում՝ մասնակիցների և վերջնական սպառողների համար:

Արդյունավետության բարձրացման կարևոր գործոններից է մրցակցությունը, որը նպաստում է նորամուծությունների ներդրմանը, ծառայությունների մատուցման ժամկետների կրճատմանը և գների նվազեցմանը: Սակայն հաշվի առնելով վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի ստեղծման և շահագործման ծախսատարությունը, մասշտաբի էֆեկտի գործոնը, բնական մենաշնորհների առկայությունը և մի շարք այլ խոչընդոտներ՝ մրցակցությունը տվյալ բնագավառում շատ ցածր է: Բացի այդ, համակարգում անվտանգության բարձրացման համար օպերատորները կարող են մեծ ծախսեր կատարել, որոնք սակայն միշտ չեն լինում արդարացված, այնինչ որոշումների կայացումը պետք է լինի ծախս-արդյունավետություն համադրելիության սահմաններում: Ուստի համակարգի արդյունավետության բարձրացման նկատառումներից էլնելով՝ կարևորվում է կենտրոնական բանկերի կողմից արդյունավետության ամրագրումը որպես հսկողության կարևոր նպատակ: ՀՀ ԿԲ-ն պետք է նպաստի, որ համակարգը ունակ լինի բավարարելու շուկայի պահանջները, այդ թվում՝ կապված նոր տեխնոլոգիաների ներդրման, նոր ծառայությունների մատուցման, գործառնությունների կատարման արագության հետ, մասնակիցների կողմից իրականացվող ծախսերը լինեն հնարավորինս ցածր, որը սակայն չպետք է անդրադառնա մատուցվող ծառայությունների որակի և անվտանգության վրա:

Բացի վերոնշյալ հիմնական նպատակներից, ՀՀ ԿԲ-ն կարևորում է նաև հանրության վստահության ամրապնդումը անկանխիկ վճարումների նկատմամբ՝ սահմանելով այն որպես հսկողության օժանդակ նպատակ:

Տվյալ նպատակը կապված է ՀՀ-ում բնակչության լայն խավերի կողմից անկանխիկ վճարային գործիքների և ծառայությունների կիրառման ավանդույթներ ստեղծելու և ազգային արժույթի նկատմամբ վստահությունն ամրապնդելու ՀՀ ԿԲ գլոբալ քաղաքականության հետ:

3. Հսկողության շրջանակը (օբյեկտները)

3.1. Միջազգային փորձը վկայում է, որ հսկողության առարկա են հիմնականում հանդիսանում այն ՖՇԵ-ները, որոնք ունեն էական նշանակություն երկրի ֆինանսական համակարգի համար և որոնք ապահովում են վճարումների և արժեթղթերով հաշվարկների հետ կապված հիմնական հոսքերը: Այս համակարգերը տարանջատվում են երկու հիմնական տեսակների՝ **համակարգային** և **հանրային** նշանակություն ունեցող համակարգեր (ՖՇԵ-ներ)՝ կախված երկրի ֆինանսական համակարգի կայունության վրա դրանց ունեցած ազդեցության չափից⁹:

⁹ Համաձայն Միջազգային հաշվարկների բանկի սահմանման՝
Համակարգային նշանակություն ունեցող համակարգերի (systemically important payment systems) թվին են դասվում այն վճարային համակարգերը, որոնք կարող են հանգեցնել համակարգային ռիսկի առաջացմանը՝ վտանգելով երկրի ֆինանսական կայունությունը:
Հանրային (էական) նշանակություն ունեցող համակարգերի (payment systems of prominent importance) թվին են դասվում այն համակարգերը, որոնցում տեղի ունեցող խափանումները կարող են էական տնտեսական հետևանքներ ունենալ և խարխլել վճարահաշվարկային համակարգերի և ընդհանուր առմամբ ազգային արժույթի նկատմամբ հանրության վստահությունը:

- 3.2. Երկրների մի մասը հսկողության շրջանակում ներառում են միայն համակարգային նշանակություն ՖՇԵ-ները: Եվրոմիությունը ներառում է ոչ միայն համակարգային նշանակություն ունեցող համակարգերը, այլ նաև հանրային նշանակություն ունեցող մանրածախ վճարային համակարգերը, ինչպես նաև այլ վճարային համակարգերը:
- 3.3. Հսկողության օբյեկտներ կարող են հանդես գալ ինչպես վճարային և արժեթղթերի համակարգերը, այնպես նաև համակարգային կամ հանրային նշանակություն ունեցող այլ ՖՇԵ-ներ, ինչպիսին են օրինակ Գլխավոր գործընկերները (CCP), Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիաները (CSD), ծառայություն մատուցողներ, թղթակից և հաշվարկային (custodian) բանկեր, վճարային գործիքներ և սխեմաներ, և այլն:
- 3.4. Ելնելով հսկողության սահմանված նպատակներից՝ Հայաստանի Հանրապետությունում հսկողության շրջանակում ներառվում են.

1) Համակարգային նշանակություն ունեցող վճարահաշվարկային համակարգերը

Համակարգային նշանակություն ունեցող համակարգերի համար սահմանվում են հետևյալ չափանիշները.

- ա) տվյալ համակարգով է իրականացվում ներհանրապետական վճարումների համախառն ծավալի 75%-ը և ավելին, և/կամ
- բ) համակարգով իրականացվում են հիմնականում խոշորածավալ վճարումներ, և/կամ
- գ) տվյալ համակարգը կիրառվում է որպես ֆինանսական շուկայում գործառնությունների կամ այլ ՖՇԵ-ների վերջնահաշվարկի իրականացման համակարգ:

2) Արժեթղթերի հաշվարկային համակարգերը

Արժեթղթերի հաշվարկային համակարգերը համակարգային նշանակություն ունեն ֆինանսական շուկայում իրենց առանցքային դերի, այլ համակարգերի հետ իրենց փոխգործակցության և ֆինանսական համակարգի կայունության վրա հնարավոր ազդեցության պատճառով: Ուստի ՀՀ կենտրոնական բանկի, այնպես նաև Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվարկային համակարգերը հանդիսանում են ՀՀ ԿԲ հսկողության օբյեկտ և ներառվում են հսկողության շրջանակում:

3) Հանրային նշանակություն ունեցող վճարահաշվարկային համակարգերը

Համակարգային նշանակություն չունեցող վճարահաշվարկային համակարգերը դասվում են հանրային նշանակություն ունեցող, եթե բավարարում են հետևյալ չափանիշներին.

- ա) տվյալ համակարգը երկրի միակ մանրածախ վճարումների համակարգն է, և/կամ
- բ) համակարգով իրականացվում է ներհանրապետական վճարումների համախառն ծավալի 25%-ից ավելին, և/կամ
- գ) համակարգով իրականացվում է տվյալ տեսակի (օրինակ՝ վճարային քարտերով ներհանրապետական վճարումներ, վճարային քարտերով միջազգային

վճարումներ, առանց հաշվի բացման միջազգային վճարումներ, այլ վճարումների ծավալի 30%-ը և ավելին: Հաշվի առնելով մասնավոր տրանսֆերտների զգալի մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում՝ առանց հաշվի բացման միջազգային դրամական փոխանցումների դեպքում նշված շեմը սահմանվում է 10% և ավելին:

3.5. Անկանխիկ վճարումների նկատմամբ հանրության վստահության ամրապնդման նպատակն ապահովելու համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից կարևորվում է նաև վճարային գործիքների/ սխեմաների հսկողությունը, որը սակայն սահմանափակվելու է միայն մոնիթորինգով՝ առաջնահերթություն տալով համակարգերին: ՀՀ կենտրոնական բանկի հսկողության օբյեկտ են լինելու ՀՀ-ում կիրառվող այն վճարային գործիքները/սխեմաները, որոնք.

ա) լայնորեն կիրառվում են հանրության կողմից անկանխիկ վճարումների իրականացման ժամանակ, կամ ունեն նման միտումներ, և

բ) որոնց կիրառումը կարող է սպառողների համար մեծ ռիսկեր պարունակել, դրանով իսկ խարխիլելով հանրության վստահությունը անկանխիկ վճարումների նկատմամբ:

3.6. Ռիսկերի բացահայտման և գնահատման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվում է նաև միջազգային վճարահաշվարկային բնագավառում նոր տեխնոլոգիաների, նոր վճարային գործիքների, դրանց հետ կապված ռիսկերի, և վերջիններիս չեզոքացմանն ուղղված միջոցների ուսումնասիրում, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի կողմից համապատասխան կանոնակարգիչ ակտերի մշակման և/կամ հսկողության շրջանակներում վերջիններիս ներառման անհրաժեշտության որոշման ընդունում:

3.7. Հսկողության օբյեկտ են հանդիսանում նաև ՀՀ-ում գործող արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերը, որոնց հսկողության առանձնահատկությունները նկարագրված են Գլուխ 5-ում:

3.8. Հսկողության շրջանակում ներառված համակարգերի դասակարգումը իրականացվում է տարին մեկ:

4. Հսկողության շրջանակում ներառված համակարգերին ներկայացվող սկզբունքները (պահանջները)

4.1. ՀՀ կենտրոնական բանկը հսկողության աշխատանքների շրջանակում հայաստանյան համակարգերի գնահատման ժամանակ որպես հիմք է ընդունում ՄՀԲ-ի կողմից սահմանված «Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին ներկայացվող սկզբունքները»¹⁰ փաստաթղթով սահմանված սկզբունքները: Վերջիններս համառոտ ներկայացված են Հավելված 1-ում, իսկ գնահատման մեթոդաբանությունը¹¹ թարգմանված է հայերեն լեզվով և տեղադրված է ՀՀ ԿԲ պաշտոնական կայք-էջում¹²:

¹⁰ “Principles for Financial Market Infrastructures”, BIS, 2012

¹¹ “Principles for Financial Market Infrastructures : Disclosure Framework and Assessment Methodology”, BIS, 2012

¹² <https://www.cba.am/Storage/AM/downloads/vchar/PFMI-translation.pdf>

- 4.2. Համակարգային նշանակություն ունեցող հայաստանյան ՖՇԵ-ների պարագայում դիտարկվում են վերոնշյալ բոլոր սկզբունքները, մինչդեռ հանրային նշանակություն ունեցող վճարային համակարգերի համար առանձնացվում են սկզբունքների (և դրանց ներքո առանցքային դրույթների)¹³ միայն մի մասը՝ կախված ֆինանսական կայունության վրա վերջինիս ազդեցությունից (մանրամասները՝ Հավելված 1-ում):
- 4.3. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում ՀՀ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասնակցության համար թույլտվությունների տրամադրման գործընթացի ներքո իրականացվում է համակարգի ռիսկ-արդյունավետության վերլուծություն և գնահատում՝ սահմանված նորմատիվային պահանջներին բավարարելու գծով՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների ներքո: Պահանջները սահմանվում են ՀՀ ԿԲ նորմատիվային ակտերով՝ հիմք ընդունելով միջազգային ստանդարտները:
- 4.4. Անհրաժեշտությունից ելնելով ՀՀ ԿԲ-ն կարող է սահմանել նաև համակարգերին ներկայացվող նորմատիվային պահանջներ: Նման իրավասություն տրված է Վճարահաշվարկային օրենքով, այն է՝ հայաստանյան վճարահաշվարկային համակարգը պետք է բավարարի ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ վճարային համակարգերին ներկայացվող տեխնիկական, անվտանգության, ծրագրային, մասնակցության, համակարգի գործունեության կանոններին ներկայացվող պահանջներին (եթե այդպիսիք առկա են):
- 4.5. Հսկողության իրականացման ժամանակ ՀՀ ԿԲ-ն կարող է հիմք ընդունել նաև միջազգայնորեն ճանաչված այլ սկզբունքներ/պահանջներ/ստանդարտներ՝ կախված տվյալ ՖՇԵ-ի տեսակից կամ կիրառվող վճարային գործիքից¹⁴: Նման դեպքերում համապատասխան տեղեկատվություն կհրապարակվի ՀՀ ԿԲ կայք-էջում և համակարգերի օպերատորները կտեղեկացվեն այդ մասին:

Հավելված 1-ում ընդհանուր ձևով ներկայացված են «Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին ներկայացվող սկզբունքները»՝ ըստ դրանց կիրառման տարբեր տեսակի ՖՇԵ-ների:

5. Հսկողության իրականացման գործընթացը (գործիքակազմը) և ներազդման լծակները

ՖՇԵ հսկողությունը շարունակական գործընթաց է, որը սահմանում է այն քաղաքականությունն ու սկզբունքները, որոնցով պետք է ուղղորդվել: ՀՀ ԿԲ-ն կիրառում է այդ սկզբունքները նախագծվող, արդիականացվող և հսկվող ՖՇԵ-ների մոնիթորինգի և

¹³ Որպես հիմք որդեգրվել է Եվրոպական կենտրոնական բանկի մոտեցումը, տես՝ “Revised oversight framework for retail payment systems”, ECB, 2016

¹⁴ Օրինակ՝ առանց հաշվի բացման դրամական փոխանցումների համակարգերի գնահատման ժամանակ կարող են որպես հիմք ընդունվել նաև “General principles for international remittance services, BIS, 2007” փաստաթղթում սահմանված պահանջները: Կամ համակարգերում գործառնական ռիսկի գնահատման ժամանակ կարող են հաշվի առնվել նաև “Guidance on cyber resilience for financial market infrastructures, BIS, 2016” փաստաթղթում սահմանված պահանջները

վերլուծության ժամանակ, և գնահատում է, թե որքանով են վերջիններս ապահովում (բավարարում) հսկողության կողմից որդեգրված սկզբունքները/ պահանջները՝ անհրաժեշտության դեպքում տալով համապատասխան առաջարկություններ համակարգերի օպերատորներին՝ համակարգերում բացահայտված ռիսկերը սահմանափակելու և համակարգի արդյունավետությունն ու անվտանգությունը բարձրացնելու համար:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից հսկողության իրականացման գործընթացը ներառում է հետևյալ 3 փուլերը՝

- ա) մոնիթորինգ և վերլուծություն,
- բ) գնահատում,
- գ) փոփոխությունների իրականացմանը նպաստում:

5.1. Վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի մոնիթորինգ և վերլուծություն

5.1.1. Հսկողության խնդիրների ապահովման նպատակով ՀՀ ԿԲ-ն իրականացնում է վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի պարբերական մոնիթորինգ՝ դիտարկելով համակարգի ընթացիկ գործունեությունը, իրականացնելով վերլուծություն և տեղի ունեցած միջադեպերի և դրանց հետևանքների ուսումնասիրություն: Վերջինս իրենից ներկայացնում է համակարգերի գործունեության ընդհանուր գնահատում:

5.1.2. ՀՀ ԿԲ-ն իրականացնում է նաև հսկողության շրջանակում չներառված ՖՇԵ-ների գործունեության դիտարկում՝ ուսումնասիրելու, թե արդյոք վերջիններում տեղի ունեցող զարգացումները կարող են հանգեցնել դրանց՝ հսկողության շրջանակում ընդգրկմանը: Այս ՖՇԵ-ների հսկողությունը սահմանափակվում է միայն մոնիթորինգով, ինչը հնարավորություն է տալիս մշտապես ուշադրության կենտրոնում պահել ՀՀ-ում գործող բոլոր ՖՇԵ-ները, և ռիսկերի առաջացման հավանականության դեպքում՝ համապատասխան միջոցներ կիրառել դրանք զսպելու (նվազեցնելու) ուղղությամբ: Ուշադրությանն են արժանանում հատկապես այն համակարգերը, որոնցում մասնակցում են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների մեծ մասը կամ խոշոր բանկերը:

5.1.3. Հավաքագրվող տեղեկատվությունը ոչ միայն քանակական և ծավալային ցուցանիշների մասին վիճակագրական տվյալներ են՝ ընդհանուր վերլուծություն իրականացնելու համար, այլ նաև որակական բնույթի այլ տեղեկատվություն (այդ թվում ՖՇԵ-ի ներքին աուդիտի և/կամ անկախ աուդիտորական կազմակերպության գնահատման արդյունքներին առնչվող), որը հնարավորություն կտա վերլուծություն անել՝ ՖՇԵ-ների գործունեության ռիսկայնության, ռիսկերի կառավարման միջոցառումների, տեխնիկական միջավայրի, տեղի ունեցած միջադեպերի և խափանումների, գործունեության թափանցիկության, ինչպես նաև գործունեության կանոններում իրականացված փոփոխությունների վերաբերյալ:

5.2. Հայաստանյան վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի գնահատում (assessment)

5.2.1. ՀՀ կենտրոնական բանկն իրականացնում է հսկողության շրջանակում ներառված Հայաստանյան համակարգերի գնահատում՝ հիմնվելով սույն հայեցակարգի 4-րդ գլխում սահմանված սկզբունքների(պահանջների) վրա:

Գնահատման նպատակն է երաշխավորել, որ համակարգի գործունեության կանոնները և գործընթացները ապահովեն համակարգում ռիսկերի կառավարումն ու նվազեցումը, և որ ռիսկերի կառավարմանն ուղղված մեխանիզմները/ միջոցառումները բավարար լինեն ցանկացած տեսակի խնդիրների հաղթահարման համար:

5.2.2. Համակարգային նշանակություն ունեցող հայաստանյան ՖՇԵ-ների գնահատման պարբերականությունը սահմանվում է 4 տարի, իսկ հանրային նշանակություն ունեցողներինը՝ 6 տարի: Չնայած այս պարբերականությանը՝ ՀՀ ԿԲ կողմից կարող է ընդունվել որոշում, համաձայն որի ՀՀ ԿԲ ռազմավարական ծրագրերով և/կամ տարեկան աշխատանքային ծրագրերով, առաջնահերթությունից և կարևորությունից ելնելով, կարող է սահմանվել գնահատման այլ հաջորդականություն, ինչպես նաև որոշում ընդունել գնահատումը կատարել ամբողջական, թե մասնակի: Որոշման կայացման համար հիմք է ընդունվում ռիսկայնության էքսպերտային գնահատման մոտեցումը (ըստ ռիսկի մակարդակի)՝ հաշվի առնելով նշանակալի փոփոխություններն ու զարգացումները և/կամ սահմանված պահանջների/ ստանդարտների փոփոխությունը:

5.2.3. Գնահատման գործընթացն ապահովելու համար կազմվում է հսկողության շրջանակում ներառված հայաստանյան համակարգերի գնահատման ժամանակացույց: Համաձայն ժամանակացույցում ներառված հերթականության՝ յուրաքանչյուր համակարգի հսկողության իրականացման ժամանակ կազմվում է աշխատանքային ծրագիր, որում նկարագրվում է գնահատման գործընթացը, ժամկետները և ակնկալվող արդյունքը:

5.2.4. Գնահատման գործընթացը ներառում է հետևյալ փուլերը.

- 1) գնահատվող ՖՇԵ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- 2) հավաքագրված տեղեկատվության վերլուծություն և գնահատում՝ ըստ սահմանված յուրաքանչյուր պահանջի/սկզբունքների և գնահատման ընդհանուր մեթոդաբանության՝ տալով համապատասխան գնահատականներ (բավարարում է լիովին, հիմնականում բավարարում է, բավարարում է մասնակի, չի բավարարում),

- 3) գնահատման արդյունքների հիման վրա ռիսկային և/կամ արդյունավետության տեսակետից թույլ դրույթների/ոլորտների առանձնացում, որոնք անհրաժեշտ է շտկել/ փոփոխել՝ սահմանված սկզբունքներին/պահանջներին բավարարելու համար,
- 4) գնահատման արդյունքների վերաբերյալ մանրամասն հաշվետվության կազմում և ներկայացում ՀՀ ԿԲ ղեկավարությանը (մանրամասները տես՝ 5.3 ենթագլխում):
- 5) գնահատված ՖՇԵ-ի հսկողության շրջանակներում իրականացվելիք հետագա մոնիթորինգի ծրագրի կազմում:

5.3. Հայաստանյան համակարգերի գնահատման արդյունքների ներկայացում և փոփոխությունների նախաձեռնման նպաստում

5.3.1. ՀՀ վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվարկային համակարգերի գնահատման արդյունքը կարող է լինել դրական՝ սահմանված բոլոր սկզբունքները/պահանջները բավարարելու դեպքում, մասնակի կամ լրիվ բացասական՝ եթե սկզբունքները/պահանջները մասնակի են բավարարվում կամ չեն բավարարվում: Գնահատման արդյունքները և ըստ յուրաքանչյուր սկզբունքի դիտարկումները ներկայացվում և քննարկվում են գնահատվող ՖՇԵ-ի օպերատորի հետ: Օպերատորը կարող է ներկայացնել իր հիմնավորումները, թե ինչու է գտնում, որ առանձին դիտարկումները ոչ այդքան ռիսկային են կամ առաջարկվող փոփոխությունները ոչ շատ հրատապ, կամ առկա խոչընդոտների պատճառով դժվար իրականացվելի: Գնահատող խմբի կողմից մանրամասն ուսումնասիրվում և վերլուծվում են օպերատորի հիմնավորումները, որոնց հիման վրա կարող են փոփոխություններ (ճշգրտումներ) կատարվել գնահատման հաշվետվությունում կամ անհրաժեշտության դեպքում՝ առաջարկել օպերատորին գրավոր հիմնավորում ներկայացնել:

5.3.2. Օպերատորի հետ որոշակի դրույթների վերաբերյալ անհամաձայնությունների դեպքում գնահատող խմբի կողմից կատարվում է համապատասխան միջոցառումների չիրականացման ռիսկայնության գնահատում/վերլուծություն, այն է՝ արդյոք տվյալ դիտարկումներից բխող փոփոխությունների չապահովումը կարող է հանգեցնել մեծ ռիսկերի կամ հանրության վստահության անկման, թե ոչ: Վերլուծության արդյունքները ևս կցվում են ՀՀ ԿԲ ղեկավարությանը ներկայացվող գնահատման հաշվետվությանը:

5.3.3. Գնահատման հաշվետվությունը և վերոնշյալ այլ փաստաթղթերը ներկայացվում է ՀՀ ԿԲ ղեկավարությանը: Եթե գնահատման արդյունքում ի հայտ են գալիս օպերատորի կողմից ՀՀ իրավական ակտերով սահմանված նորմատիվային պահանջների խախտումներ, ապա ՀՀ ԿԲ կողմից կարող է ընդունվել որոշում՝ իր վերահսկողական իրավասությունների շրջանակում ՀՀ

օրենսդրությամբ, այդ թվում՝ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված ներազդման լծակներ կիրառելու վերաբերյալ: Գնահատման հիմնական ամփոփ արդյունքները հրապարակվում են ԿԲ-ի պաշտոնական կայք-էջում:

5.3.4. Գնահատման արդյունքում կարող է բացահայտվել, որ առկա խնդիրները պահանջում են օրենսդրական կարգավորում կամ որոշակի նորմատիվային պահանջների սահմանում: ՀՀ կենտրոնական բանկը կարող է հանդես գալ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ, որի համար կարող են ստեղծել աշխատանքային խմբեր՝ ներգրավելով առևտրային բանկերի, այլ շահագրգիռ կազմակերպությունների, տեխնիկական խնդիրների կարգավորման ժամանակ նաև մասնագիտացված կազմակերպությունների ներկայացուցիչների, և ապահովել այդ խմբերի աշխատանքների ղեկավարումը:

5.4. ՀՀ-ում գործող արտասահմանյան համակարգերի հսկողության առանձնահատկությունները

5.4.1. ՀՀ բանկերը և վճարահաշվարկային կազմակերպությունները կարող են մասնակցել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն ՀՀ ԿԲ կողմից տրված թույլտվության հիման վրա: ՀՀ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ՀՀ ԿԲ ներկայացված արտասահմանյան համակարգում մասնակցելու թույլտվության տրամադրելու միջնորդագրի հիման վրա իրականացվում է համակարգի նախնական գնահատում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության տեսակետից:

5.4.2. ՀՀ ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի գնահատման դեպքում, եթե հայտնաբերվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին անհամապատասխանություն և/կամ սահմանված ռիսկերի առկայություն, ապա կարող են կիրառվել հետևյալ մոտեցումները՝

ա/ ՀՀ ԿԲ-ն համակարգի հայաստանյան մասնակցին է ներկայացնում իր առաջարկություններն ու դիտողությունները, որոնք անհրաժեշտ է հստակեցնել, փոփոխել կամ ավելացնել՝ սահմանված պահանջներին բավարարելու համար: Վերջինս բանակցում է համակարգի օպերատորի հետ՝ իր հետ կնքված պայմանագրերում կամ միմյանց միջև հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերում համապատասխան փոփոխություններն ապահովելու համար,

բ/ ՀՀ ԿԲ-ն առաջարկությունների ընդունման համար անմիջականորեն համագործակցում է տվյալ համակարգի օպերատորի հետ,

- 5.4.3. Գնահատման արդյունքների հիման վրա կայացվում է որոշում՝ արտասահմանյան համակարգը գնահատված համակարգերի անվանացանկում ներառելու և ՀՀ ֆինանսական կազմակերպությանը մասնակցության թույլտվություն տրամադրելու կամ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգին մասնակցության թույլտվությունը մերժելու վերաբերյալ:
- 5.4.4. Եթե սույն հայեցակարգի 3-րդ գլխում սահմանված չափանիշների հիման վրա ՀՀ-ում գործող արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը դասվում է որպես համակարգային կամ հանրային նշանակություն ունեցող վճարահաշվարկային համակարգ, ապա հսկողության շրջանակում իրականացվում է այդպիսի արտասահմանյան համակարգերի մոնիթորինգ:
- 5.4.5. Եթե ՀՀ ֆինանսական կազմակերպության վերահսկողության կամ հսկողության շրջանակում իրականացվող մոնիթորինգի ժամանակ հայտնաբերվում է, որ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը ՀՀ-ում գործում է օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, ապա Կենտրոնական բանկը կարող է կիրառել օրենքով իրեն վերապահված լծակները, այն է՝ ընդունել որոշում տվյալ համակարգում մասնակցության արգելման մասին:
- 5.4.6. ՀՀ ԿԲ-ն կարող է համակարգային կամ հանրային նշանակություն ունեցող արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի ռեզիդենտության երկրի կենտրոնական բանկի կամ հսկողության համար պատասխանատու այլ իրավասու մարմնի հետ համագործակցային հսկողության շրջանակում աշխատանքներ իրականացնել (տես՝ գլուխ 6):

6. Հսկողության բնագավառում ՀՀ կենտրոնական բանկի միջազգային համագործակցությունը

- 6.1. Միջազգային փոխանցումներ իրականացնող համակարգերի (առանց հաշվի բացման, քարտային, այլ) նկատմամբ հսկողություն իրականացնելիս ՀՀ կենտրոնական բանկը, այլ երկրների կենտրոնական բանկերի և միջազգային այլ փորձագետների հետ համագործակցելիս, հիմնվում է ՄՀԲ-ի կողմից սահմանված համատեղ միջազգային հսկողության սկզբունքների վրա (principles for international cooperative oversight)¹⁵:
- 6.2. ՀՀ ԿԲ-ն, ամրագրելով 6.2.1 կետով սահմանված սկզբունքները, համատեղ միջազգային հսկողության շրջանակում անհրաժեշտության դեպքում կնքում է փոխըմբռնման հուշագրեր, որով ամրագրվում են փոխանակվող տեղեկատվության շրջանակը, գործընթացը, գաղտնիության հետ կապված և համատեղ հսկողությանն առնչվող մի շարք այլ կարևոր դրույթներ:

¹⁵ “Central Bank Oversight of Payment and Settlement Systems”, BIS , 2005

7. Հսկողության արդյունքների վերաբերյալ հաշվետվողականությունը

- 7.1. Հսկողության արդյունքների վերաբերյալ կազմվում է տվյալ տարվա ընթացքում հսկողության բնագավառում իրականացված բոլոր աշխատանքների վերաբերյալ մանրամասն հաշվետվություն (Հսկողության հաշվետվություն), որը ներառում է ինչպես իրականացված մոնիթորինգի, այնպես նաև ՖՇԵ-ների գնահատման արդյունքները և տվյալ ժամանակահատվածում կազմված բոլոր նպատակային հաշվետվությունները:
- 7.2. Յուրաքանչյուր վճարային համակարգի գնահատումից հետո ՀՀ ԿԲ ղեկավարությանն են տրամադրվում գնահատման արդյունքները՝ վերլուծած ըստ յուրաքանչյուր սկզբունքի: Ներկայացվում են բացահայտված խնդիրները և դրանց կանխարգելմանը կամ նվազեցմանն ուղղված առաջարկությունները, համագործակցության արդյունքում իրականացված աշխատանքները:
- 7.3. Հսկողության շրջանակում կարող են իրականացվել նաև նպատակային վերլուծություններ (այդ թվում՝ բացահայտված պատահարների վերաբերյալ ուսումնասիրություններ), որոնք ՀՀ ԿԲ ղեկավարությանն են ներկայացվում համապատասխան սահմանված ժամկետներում:
- 7.4. Հսկողության բնագավառում իրականացված աշխատանքների վերաբերյալ բոլոր հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկի ղեկավարությանը:
- 7.5. ՀՀ կենտրոնական բանկը, իր գործունեության թափանցիկությունն ապահովելու և հանրությանը իրազեկ պահելու նպատակով որոշակի պարբերականությամբ (տարին մեկ անգամ) հրապարակում է հսկողության գծով իր կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Տեղեկատվության մեջ ամփոփ ներկայացվում են համակարգերի գործունեության փաստացի գնահատման արդյունքները և ՀՀ կենտրոնական բանկի կողմից այս բնագավառում իրականացվող աշխատանքները:
- 7.6. Մոնիթորինգի և ՖՇԵ-ների գնահատման ամփոփ արդյունքները հրապարակվում են նաև տվյալ տարվա Ֆինանսական կայունության հաշվետվություններում:

Հավելված 1

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին ներկայացվող սկզբունքները	Համակարգային վճարային համակարգ	Հանրային վճարային համակարգ	Արժեթղթերի հաշվարկային համակարգ (ԱՀՀ)	Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա (ԱԿԴ)
<p>Սկզբունք 1. Իրավական հիմքեր ՖՇԵ-ն իր գործունեության բոլոր էական ու առանցքային բնագավառների համար պետք է ունենա լավ հիմնավորված, հստակ սահմանված, թափանցիկ և գործուն/ազդեցիկ իրավական հիմքեր բոլոր իրավագործություններում</p>	X	X	X	X
<p>Սկզբունք 2. Կառավարում ՖՇԵ-ն պետք է ունենա հստակ և թափանցիկ կառավարման մեխանիզմներ, որոնք կնպաստեն ՖՇԵ-ի անվտանգությանն ու արդյունավետությանը, ֆինանսական համակարգի կայունությանը, կրիսեն հանրության շահերից և շահագրգիռ բոլոր կողմերի նպատակներից</p>	X	X	X	X
<p>Սկզբունք 3. Ռիսկերի բազմակողմանի կառավարման համակարգ ՖՇԵ-ն պետք է ունենա իրավական, վարկային, իրացվելիության, գործառնական և այլ տեսակի ռիսկերի բազմակողմանի կառավարման հստակ քաղաքականություն</p>	X	X	X	X
<p>Սկզբունք 4. Վարկային ռիսկ ՖՇԵ-ն պետք է արդյունավետորեն գնահատի, հսկի և կառավարի իր վարկային ռիսկերը, որոնք կարող են առաջանալ մասնակիցներից, ինչպես նաև համակարգի վճարային, քլիրինգային և վերջնահաշվարկի գործընթացներից: ՖՇԵ-ն պետք է միանշանակորեն ապահովի բավարար ֆինանսական ռեսուրսներ ամբողջովին ծածկելու յուրաքանչյուր մասնակցից բխող վարկային ռիսկը: Բացի այդ, Գլխավոր գործընկերը, որը ներգրավված է բազմապրոֆիլ ռիսկային գործունեության մեջ կամ համակարգային նշանակություն ունի տարբեր իրավագործություններում, պետք է ունենա լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, որոնք բավարար կլինեն ծածկելու հնարավոր ճգնաժամային իրավիճակների մեծ շրջանակ՝ ներառյալ առնվազն այն երկու</p>	X		X	

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին ներկայացվող սկզբունքները	Համակարգային վճարային համակարգ	Հանրային վճարային համակարգ	Արժեթղթերի հաշվարկային համակարգ (ԱՀՀ)	Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա (ԱԿԴ)
ամենախոշոր մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց անվճարունակությունը, որոնք ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում, կարող են ԳԳ-ի նկատմամբ ամենամեծ համախառն վարկային ռիսկն առաջացնել: Բոլոր մնացած Գլխավոր գործընկերները պետք է ապահովեն նշված պահանջը առնվազն մեկ ամենախոշոր մասնակցի անվճարունակության դեպքի համար				
<p>Սկզբունք 5. Ապահովվածություն</p> <p>Իր կամ իր մասնակիցների վարկային ռիսկի կառավարման համար ապահովվածություն պահանջող ՖՇԵ-ն որպես ապահովվածություն պետք է ընդունի վարկային, իրացվելիության և շուկայական ցածր ռիսկ ունեցող միջոցներ: ՖՇԵ-ն պետք է նաև սահմանի և կիրառի համապատասխան պահպանողական հեյրքաթեր (haircuts) և կենտրոնացվածության սահմանաչափեր</p>	X		X	
<p>Սկզբունք 6. Երաշխավորման դեպոզիտ</p> <p>Գլխավոր գործընկերը պետք է ծածկի համակարգի մասնակիցներից բխող իր վարկային ռիսկերը բոլոր ապրանքների/ծառայությունների գծով՝ սահմանաչափերի արդյունավետ համակարգի միջոցով, որը պետք է լինի ռիսկերի վրա հիմնված և պարբերաբար վերանայվի</p>				
<p>Սկզբունք 7. Իրացվելիության ռիսկ</p> <p>ՖՇԵ-ն պետք է արդյունավետ կերպով գնահատի, հսկի և կառավարի իր իրացվելիության ռիսկը: Այն պետք է միանշանակորեն ապահովի բոլոր արժույթների գծով բավարար իրացվելի միջոցներ՝ իր վճարային պարտավորությունների վերջնահաշվարկը նույն օրը, իսկ սահմանված լինելու դեպքում՝ նաև օրվա ընթացքում կամ մի քանի օր անց, ապահովելու համար, այդ թվում՝ բազմաբնույթ հնարավոր ճգնաժամային իրավիճակների դեպքում: Վերջիններս պետք է ներառեն ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ՖՇԵ-ի նկատմամբ առնվազն ամենամեծ համախառն իրացվելիության պարտավորություն ունեցող մասնակցի և նրա փոխկապակցված անձանց կողմից պարտավորությունների չկատարման դեպքեր:</p>	X		X	

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածներին ներկայացվող սկզբունքները	Համակարգային վճարային համակարգ	Հանրային վճարային համակարգ	Արժեթղթերի հաշվարկային համակարգ (ԱՀՀ)	Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա (ԱԿԴ)
<p>Սկզբունք 8. Հաշվարկների վերջնականություն</p> <p>ՖՇԵ-ն պետք է ապահովի հստակ և հուսալի վերջնահաշվարկ առնվազն մինչև հաշվարկների կատարման օրվա վերջ: Անհրաժեշտության կամ նպատակահարմարության դեպքում համակարգը պետք է ապահովի միջօրյա կամ իրական ժամանակում վերջնահաշվարկի կատարում</p>	X	X	X	
<p>Սկզբունք 9. Դրամական վերջնահաշվարկներ</p> <p>ՖՇԵ-ն հնարավորության և նպատակահարմարության դեպքում դրամական վերջնահաշվարկները պետք է իրականացնի կենտրոնական բանկում վարվող հաշիվներով: Եթե վերջնահաշվարկը չի ապահովվում Կենտրոնական բանկում վարվող հաշիվներով, ապա համակարգը պետք է նվազագույնի հասցնի և խստորեն վերահսկի առևտրային բանկերի միջոցով վերջնահաշվարկի կատարման արդյունքում առաջացող վարկային և իրացվելիության ռիսկերը</p>	X	X	X	
<p>Սկզբունք 10. Փաստացի առաքում</p> <p>ՖՇԵ-ն պետք է հստակ սահմանի իր պարտավորությունները՝ կապված իրական գործիքների (physical instruments) կամ ապրանքների (commodities) առաքման հետ, ինչպես նաև պետք է բացահայտի, հսկի և կառավարի նման առաքումների հետ կապված ռիսկերը</p>			X	X
<p>Սկզբունք 11. Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիաներ</p> <p>Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիան պետք է ունենա համապատասխան կանոններ և ընթացակարգեր, որոնք թույլ կտան ապահովել արժեթղթերի թողարկումների ամբողջականությունը, նվազեցնել և կառավարել արժեթղթերի պահպանման և փոխանցման հետ կապված ռիսկերը: Արժեթղթերի ոչ փաստաթղթավորված (էլեկտրոնային) փոխանցումն ապահովելու համար ԱԿԴ-ն դրանց պահպանումը/ պահառությունը պետք է իրականացնի հաշվառված (իմոբիլիզացված՝ շրջանառությունից փաստացի հանված և Կենտրոնական դեպոզիտարիայում սեփականատերերի հաշիվների վրա</p>				X

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին ներկայացվող սկզբունքները	Համակարգային վճարային համակարգ	Հանրային վճարային համակարգ	Արժեթղթերի հաշվարկային համակարգ (ԱՀՀ)	Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա (ԱԿԴ)
հաշվառվող) կամ ապանյութականացված ձևով				
<p>Սկզբունք 12. Երկու ֆինանսական ակտիվների փոխանակման համակարգեր</p> <p>Եթե ՖՇԵ-ն իրականացնում է այնպիսի գործառնությունների վերջնահաշվարկ, որը ենթադրում է երկու փոխկապակցված պարտավորությունների մարում (օրինակ, արժեթղթերով կամ արտարժույթով գործարքները), այն պետք է բացառի պրինցիպալի ռիսկը՝ մի պարտավորության վերջնահաշվարկը պայմանավորելով (զուգորդելով) մյուսի պարտավորության վերջնահաշվարկի կատարմամբ</p>	X		X	
<p>Սկզբունք 13. Մասնակիցների կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) հետ կապված կանոններ և ընթացակարգեր</p> <p>ՖՇԵ-ն պետք է ունենա հստակ սահմանված և արդյունավետ կանոններ ու ընթացակարգեր՝ մասնակցի կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) դեպքերը կառավարելու համար: Այդ կանոններն ու ընթացակարգերը պետք է ապահովեն ՖՇԵ-ի կողմից ժամանակին համապատասխան միջոցառումների ձեռնարկում կորուստները և իրացվելիության հետ կապված խնդիրները սահմանափակելու, ինչպես նաև ՖՇԵ-ի կողմից իր պարտավորությունների հետագա կատարումն ապահովելու համար</p>	X	X	X	X
<p>Սկզբունք 14. Առանձնացում և տեղափոխելիություն</p> <p>Գլխավոր գործընկերը պետք է ունենա կանոններ և ընթացակարգեր, որոնք կապահովեն իր մասնակցի հաճախորդների դիրքերի և այդ դիրքերին համապատասխան ԳԳ-ին տրամադրված ապահովվածության առանձնացումը (segregation) և տեղափոխելիությունը (portability)</p>				
<p>Սկզբունք 15. Ընդհանուր բիզնես ռիսկ</p> <p>ՖՇԵ-ն պետք է բացահայտի, հսկի և կառավարի իր ընդհանուր բիզնես ռիսկը և պահի սեփական կապիտալով ապահովված բավարար չափով իրացվելի զուտ ակտիվներ՝ հավանական վնասները ծածկելու համար</p>	X	X	X	X

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին ներկայացվող սկզբունքները	Համակարգային վճարային համակարգ	Հանրային վճարային համակարգ	Արժեթղթերի հաշվարկային համակարգ (ԱՀՀ)	Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա (ԱԿԴ)
այնպես, որ կարողանա շարունակել ծառայությունների մատուցումը որպես գործող ընկերություն, եթե այդ կորուստներն ի հայտ գան: Ավելին, այդ իրացվելի գուտ ակտիվները պետք է ժամանակի ցանկացած պահի լինեն բավարար՝ կրիտիկական գործառնությունների և ծառայությունների վերականգնման կամ աստիճանական ձևով չեզոքացման համար				
Սկզբունք 16. Պահառուական և ներդրումային ռիսկեր ՖՇԵ-ն պետք է ապահովի իր սեփական և իր մասնակիցների ակտիվների պաշտպանությունը, ինչպես նաև նվազագույնի հասցնի այդ ակտիվների կորստի կամ դրանց նկատմամբ հասանելիության ուշացումների ռիսկը: ՖՇԵ-ի ներդրումները պետք է իրականացվեն իրացվելիության, վարկային և շուկայական ցածր ռիսկ պարունակող գործիքներում	X		X	X
Սկզբունք 17. Գործառնական ռիսկ ՖՇԵ-ն պետք է բացահայտի գործառնական ռիսկի ինչպես ներքին, այնպես նաև արտաքին բոլոր հնարավոր աղբյուրները, և համապատասխան համակարգերի, քաղաքականության, ընթացակարգերի և - հսկողական մեխանիզմների ներդրման միջոցով նվազագույնի հասցնի դրանց ազդեցությունը: Համակարգը պետք է ապահովի բարձր աստիճանի անվտանգություն և գործառնական հուսալիություն, ինչպես նաև բավարար և ընդլայնելի հզորություն/թողունակություն: Գործարար անընդհատության կառավարումը պետք է միտված լինի գործառնությունների ժամանակին վերականգնմանը և ՖՇԵ-ի կողմից պարտավորությունների կատարմանը, այդ թվում՝ լայնածավալ ապակայուն վիճակներում	X	X	X	X
Սկզբունք 18. Միանալու և մասնակցության պահանջներ ՖՇԵ-ն պետք է ունենա մասնակցության՝ օբյեկտիվ, ռիսկերի վրա հիմնված, հրապարակային չափանիշներ, որոնք ապահովում են բաց և արդար մուտքը (access) համակարգ/ՖՇԵ	X	X	X	X

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածներին ներկայացվող սկզբունքները	Համակարգային վճարային համակարգ	Հանրային վճարային համակարգ	Արժեթղթերի հաշվարկային համակարգ (ԱՀՀ)	Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա (ԱԿԴ)
Սկզբունք 19. Մասնակցության բազմամակարդակ կառուցվածք ՖՇԵ-ն պետք է բացահայտի, հսկի և կառավարի բազմամակարդակ մասնակցությունից առաջացող նշանակալի/ շոշափելի ռիսկերը	X		X	X
Սկզբունք 20. ՖՇԵ կապեր ՖՇԵ-ն, որի գործունեությունը փոխկապակցված է մեկ կամ մի քանի այլ ՖՇԵ-ների հետ, պետք է ապահովի այդ համագործակցության (կապերի) հետ կապված ռիսկերի բացահայտումը, հսկողությունն ու կառավարումը			X	X
Սկզբունք 21. Էֆեկտիվություն և արդյունավետություն ՖՇԵ-ն պետք է լինի էֆեկտիվ և արդյունավետ՝ իր մասնակիցների և իր կողմից սպասարկվող շուկաների պահանջները բավարարելու համար	X	X	X	X
Սկզբունք 22. Հաղորդակցման ընթացակարգեր և ստանդարտներ ՖՇԵ-ն պետք է կիրառի միջազգայնորեն ճանաչված հաղորդակցման ընթացակարգեր և ստանդարտներ, կամ առնվազն ապահովի դրանց հետ համադրելի մեխանիզմներ՝ վճարման, քլիրինգի, վերջնահաշվարկի և հաշվառման արդյունավետ իրականացումը խթանելու համար	X	X	X	X
Սկզբունք 23. Կանոնների, հիմնական հասկացությունների և շուկայական տվյալների բացահայտում ՖՇԵ-ն պետք է ունենա հստակ և համապարփակ կանոններ ու ընթացակարգեր, ինչպես նաև պետք է տրամադրի բավարար տեղեկատվություն իր մասնակիցներին՝ վերջիններիս կողմից իրենց մասնակցության արդյունքում ստանձնած ռիսկերը, միջնորդավճարները և այլ նյութական ծախսերը գնահատելու համար: Բոլոր համապատասխան կանոնները և հիմնական ընթացակարգերը պետք է լինեն հրապարակային	X	X	X	X
Սկզբունք 24. Առևտրի ռեպոզիտարիաների կողմից				

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին ներկայացվող սկզբունքները	Համակարգային վճարային համակարգ	Հանրային վճարային համակարգ	Արժեթղթերի հաշվարկային համակարգ (ԱՀՀ)	Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա (ԱԿԴ)
<p>շուկայական տվյալների բացահայտում</p> <p>Առևտրի ռեպոզիտարիան պետք է համապատասխան իրավասու մարմիններին և հանրությանը տրամադրի իրենց պահանջներին համապատասխան արդիական և ճշգրիտ տեղեկատվություն</p>				